«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2015 թվականի

Վերականգնվող և տեղափոխվող ուսանողների, ինչպես նաև կրկնակի ամփոփիչ քննություն հանձնողների, ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ պաշտպանողների համար մեկ կրեդիտի արժեքը սահմանելու և գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 15-ի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Լսելով և քննարկելով «Վերականգնվող և տեղափոխվող ուսանողների, ինչպես նաև կրկնակի ամփոփիչ քննություն հանձնողների, ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ պաշտպանողների համար մեկ կրեդիտի արժեքը սահմանելու և գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 15-ի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան), գիտական խորհուրդն արձանագրում է. հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» թիվ 1242-Ն հրամանը, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել՝ մեկ կրեդիտի արժեքը բակալավրիատում (առկա, հեռակա)՝ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ մագիստրատուրայում (առկա, հեռակա)՝ 11.000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՊՏՀ գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 15-ի «Մեկ կրեդիտի արժեք և պետական քննության կրկնակի հանձնման, ավարտական աշխատանքի ու մագիստրոսական ատենա-խոսության կրկնակի կատարման ու պաշտպանման համար վարձի չափ սահմանելու մասին» որոշումը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում 2015-2016 ուսումնական տարվանից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

19.05.2015 թ.